ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 15-23

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «25» 01 2021թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան, ի դեմս նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ-ը(այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Վլադիմիր Հարությունյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի» (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով ՀՀ ԳԱԱ–ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված 133191.7 հազ. (մեկ հարյուր երեսուներեք միլիոն հարյուր իննսունմեկ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ–ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ–ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ–ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ–ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ–ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ–ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 133191.7հազ. (մեկ հարյուր երեսուներեք միլիոն հարյուր իննսունմեկ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ	**ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ**
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	0015, ք.Երևան,Գր. Լուսավորչի 15
Հ/հ 900011024115	Կենտրոնական գանձապետարան
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/հ 900018005380
ՀՎՀՀ 00005673	ՀՎՀՀ 01506257
ՀՀ ԳԱԱ նախագահ	Տնօրեն
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. Տ.	Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Վլադիմիր Հարությունյան)
(ստորագրություն)

Հավելված N 1
«25» 01 2021 թ.
N 15-23 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն Վլադիմիր Հարությունյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «25» 01 2021 թ. N 15-23 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ **133191.7 հազ. (մեկ հարյուր երեսուներեք միլիոն հարյուր իննսունմեկ հազար յոթ հարյուր)** ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ	ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ
ՀՀ ԳԱԱ նախագահ	Տնօրեն
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված N 2
«25» 01 2021թ.
N 15-23 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
«ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման»
ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

   Ծրագրի իրականացման նպատակը 4 հիմնական գիտական ուղղությունների շրջանակներում (մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ, տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ, ծառայությունների ոլորտի զարգացում ու սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ, տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն) ՀՀ սոցիալ տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրների բացահայտումն ու համապատասխան լուծումների առաջադրումն է: Ծրագրի իրականացման ընթացքում հատուկ ուշադրություն է հատկացվում ՀՀ կառավարության գործունեության ծրագրից բխող հիմնախնդիրների լուծմանը:
3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):
   - Ծրագրի իրականացման ժամանակահատվածը մեկ տարի է՝ սկիզբ 01.01.2020թ., ավարտ՝ 31.12.2020թ.
   - Աշխատանքային խմբերն ըստ ծրագիրը կազմող ենթաբաժինների օրացուցային պլանով նախատեսված աշխատանքների կատարման մասին ներկայացնում են միջանկյալ հաշվետվություններ:
   - Միջանկյալ գիտական արդյունքները և ամփոփիչ գիտական հաշվետվությունը ներկայացվում են պատվիրատուին՝ ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի եզրակացության հիման վրա:
   - Միջանկյալ ամփոփիչ հաշվետվությունների ձևավորումը կատարվում է պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան:
4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

1. Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ:

ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կազմն ու կառուցվածքը ու դրանց փոփոխության միտումները հետհեղափոխական Հայաստանում: Ինչպես գիտենք, պետության և հասարակության առջև ծառացած խնդիրների արդյունավետ լուծումը, ինչպես նաև պետության գործառույթների պատշաճ կատարումը հիմնականում պայմանավորված են բյուջետային եկամուտների առկայությամբ: Վերջիններում ամենամեծ մասնաբաժինն ունեն հարկային եկամուտները: Հաշվի առնելով այս հանգամանքը պետության հիմնական խնդիրն է դառնում մշակել և իրականացնել այնպիսի հարկային քաղաքականություն, որը ոչ միայն կապահովի կայուն բյուջետային մուտքեր,

այլ նաև կնպաստի երկրում տնտեսական գործունեության համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը, տնտեսական աճի խթանմանը, ինչպես նաև կապահովի պետության առջև ծառացած խնդիրների լուծմանը:

Իսկ պետության կողմից իրականացվող արդյունավետ հարկային քաղաքականությունն, իր հերթին, նպատակաուղղված է տնտեսական ակտիվության մակարդակի բարելավմանը, տնտեսության ներդրումային գրավչության բարձրացմանը:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության ներկա իրավիճակը, և հիմք ընդունելով հարկային նոր օրենսդրության ներդրումը, կարևորում ենք վերլուծել ՀՀ պետական բյուջեի մեջ հարկային եկամուտների կազմում ու կառուցվածքում կատարվող փոփոխությունները, ինչպես նաև գնահատել, թե թավշյա հեղափոխությունից հետո կատարվող բարեփոխումներն ինչպիսի արդյունքներ են հանգեցրել այս ոլորտում: Հենց վերջինն էլ պայմանավորել է ընտրված թեմայի արդիականությունը:

Բարձր տեխնոլոգիական հենքի վրա տնտեսության ինովացիոն դիվերսիֆիկացման հնարավորություններն ու կառուցակարգերը Հայաստանի Հանրապետությունում: Ժամանակակից բարձր տեխնոլոգիաների ստեղծման և առնտրայնացման, ինչպես նաև արտաքին շուկաներից դրանց փոխառման հենքի վրա Հայաստանի Հանրապետության տնտեսության երկարաժամկետ կայուն աճը, դրա կառուցվածքային արդիականացումը և համակողմանի դիվերսիֆիկացումը հանդիսանում է երկրի տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացման ու դրանց շնորհիվ գլոբալ տնտեսության մեջ երկրի շահեկան դիրքավորման հանգուցային ուղղություններից մեկը: Այս առումով ընտրված թեմայի արդիականությունը բխում է ՀՀ Կառավարության գործունեության ծրագրում ամրագրված հիմնարար դրույթներից ու ռազմավարական մոտեցումներից, որոնց համաձայն մրցունակ, մասնակցային և ներառական տնտեսության զարգացումը պահանջում է հարաճուն ներդրումներ մարդկային կապիտալի, գիտական հետազոտությունների, տեխնոլոգիաների ստեղծման և առնտրայնացման ու այդ հենքի վրա բարձրտեխնոլոգիական ու բարձրեկամտաբեր աշխատատեղերի ստեղծման ասպարեզում:

Առաջարկվող թեմայի շրջանակներում հետազոտվելու են այն բոլոր ինստիտուցիոնալ և կառուցակարգային գործոնները, որոնց համադրումը պետք է ապահովի բարձրտեխնոլոգիական արդյունաբերության լոկոմոտիվային դերը տնտեսության մեջ, արտահանման մեջ ավելացված արժեքի բարձր մակարդակը, ինչը իր հերթին կպայմանավորի դեպի երկիր արտարժութային բարձր եկամուտների հետադարձ հոսքը: Թեմայի շրջանակներում հետազոտվելու են Հայաստանի Հանրապետության տնտեսության ինովացիոն արդիականացման սիներգետիկ մեխանիզմները, մասնավորապես, ուսումնասիրվելու են Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների հետ նորամուծությունների բնագավառում համագործակցության, ինչպես նաև բարձրտեխնոլոգիական ոլորտում միասնական պլատֆորմների մշակման և գործադրման հնարավորությունները:

Տնտեսության ճգնաժամային կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: 2020թ. Սկզբից մոլեգնող կորոնավիրուսային համավարակը ցույց տվեց, որ ոչ միայն Հայաստանում, այլև սկզբունքորեն ամբողջ աշխարհում խիստ անբավարար մակարդակի վրա են գտնվում տնտեսության ճգնաժամային կառավարման ինստիտուցիոնալ մեխանիզմները: Համակարգելով տնտեսության ճգնաժամային կառավարման գործադրված մեխանիզմները՝ աներկբայորեն կարող ենք արձանագրել, որ դրանք բնութագրվում են հախուռն, տրամաբանական շղթայից զուրկ, իրավիճակային և հասցեականության վիճելիության բնորոշիչներով: Պետք է արձանագրել, որ տնտեսության տարատեսակվածության , բացության, մրցակցային առավելությունների գործադրման և որևէ այլ բնութագրերը չեն երաշխավորել համավարակի արդյունքում տնտեսական գործընթացների խաթարումը, ինչը արդիական է դարձնում տնտեսության ճգնաժամային կառավարման նոր գործիքակազմի մշակումն ու համապատասխան ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների ձևավորման համար: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության համար ճգնաժամային կառավարման մեխանիզմների անհրաժեշտությունը բազմակի անգամ ավելի արդիական է: Կորոնավիրուսային համավարակով պայմանավորված իրավիճակը հայաստանում կարող է կրկնվել ոչ միայն նոր վիրուսի ի հայտ գալու ռիսկով, այլև ԱԷԿ խոշոր վթարի, Արցախյան չհանգուցալուծված հակամարտության գոտում լայնամասշտաբ պատերազմական գործողությունների վերսկսման, տարածաշրջանային զարգացումների, ներքաղաքական իրավիճակի սրման և այլ հիմնախնդիրներով

պայմանավորված, ինչը անհետաձգելի է դարձնում տնտեսության ճգնաժամային կառավարման հիմնախնդիրների բացահայտումն ու համապատասխան լուծումների առաջադրումը: Թեմայի կատարման համատեքստում միջազգային և հայրենական կուտակված փորձի համատեքստում նախատեսվում է բացահայտել տնտեսության ճգնաժամային կառավարման առաջնահերթությունները, մշակել տարբեր իրավիճակներում գործողությունների ռազմավարություն և առաջարկել ռիսկերի կառավարման այլընտրանքային մեխանիզմներ:

ՀՀ-ում մարդու կյանքի կորստի ռիսկի գնահատումը շրջակա միջավայրի բացասական ազդեցության համատեքստում: Հասարակական հարաբերությունների զարգացման զուգահեռ մարդը սկսեց շահագործել բնությունը և բնական ռեսուրսները, իսկ շրջակա միջավայրի պահպանման խնդիրները դարձան օրհասական՝ պայմանավորված լինելով էներգետիկ ռեսուրսների և հումքի պակասուրդի, բնական էկոլոգիական հավասարակշռության խախտման, որոշ տեսակների կենդանիների և բույսերի ոչնչացման հետևանքով շրջակա միջավայրում որակի վատթարացման հետ: Իսկ դա նշանակում է, որ եթե մարդը չձեռնարկեր միջոցներ կանխելու շրջակա միջավայրի աղտոտումը, ուստի, առկա բնապահպանական ճգնաժամը կարող էր վերածվել էկոլոգիական աղետի: Շրջակա միջավայրի աղտոտումն ազդում է մարդու առողջության վրա՝ առաջացնելով բազմաթիվ ախտածին հիվանդություններ և վատթարացնելով մարդու օրգանիզմի բնականոն կենսագործունեությունը: Թեմայի նպատակն է գնահատել մարդու առողջության վրա շրջակա միջավայրի բացասական ներգործությունը, հիմնավորել վերջինիս սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, ինչպես նաև վերհանել շրջակա միջավայրի վատթարացման հետևանքով առաջացած հիմնական գործոնները, որոնք բերում են մարդու կյանքի կորստի ռիսկի առաջացմանը: Այդ նպատակի իրագործման համար նախագծում դրվել են հետևյալ խնդիրները. ուսումնասիրել մարդու առողջության վրա ներգործություն ունեցող շրջակա միջավայրի գործոնները, գնահատել շրջակա միջավայրի ներգործությամբ մարդու առողջությանը սպառնացող մահացության ռիսկը և դրա հետևանքով պատճառած տնտեսական վնասի չափը ՀՀ-ում, մշակել կառուցակարգ՝ ուղղված ՀՀ բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի ներգործության հետևանքով առաջացած ռիսկի և դրա ազդեցությամբ պատճառած տնտեսական վնասի չափի որոշմանը: Արդյունքում ակնկալվում է. գնահատել շրջակա միջավայրի ներգործությամբ առաջացող մարդու առողջությանը սպառնացող ռիսկը և դրա հետևանքով պատճառած տնտեսական վնասի չափն՝ ըստ սեռատարիքային խմբի, բացահայտել ՀՀ առողջապահության համակարգում առկա թերությունները՝ առաջարկելով իրականացնել հասցեական միջոցառումներ՝ ուղղված մրցակցային առողջապահության համակարգի զարգացմանը, մարդու առողջությանը սպառնացող և շրջակա միջավայրի աղտոտվածությունը բնորոշող գործոնների համակարգման արդյունքում մշակել և գնահատել շրջակա միջավայրի ազդեցությունը մարդու կյանքի տևողության վրա:

2. Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ:

Թվային տնտեսության դերը ՀՀ ագրոպարենային համակարգում: Ագրոպարենային համակարգի ժամանակակից կառավարումը տնտեսության ռազմավարական զարգացման տարր է, ներառյալ թվային տնտեսության նորարարական զարգացումները: Ճյուղի վարման ժամանակակից հայեցակարգերի ի հայտ գալը, այդ թվում նաև գյուղատնտեսությունում, հնարավորություն կատ ներդնել ռազմավարական զարգացման տարրեր, որոնց թվում են նաև թվային տեխնոլոգիաները: Տարածաշրջանային ագրոպարենային համակարգի կառավարումը պահանջում է ինովացիոն տեխնոլոգիաների օգտագործում, այդ թվում նաև ճյուղային տնտեսության թվայնացում:

Ագրոպարենային համակարգում թվային տնտեսության զարգացման խնդիրներից մեկը հանդիսանում է սպառողների տեղեկացված չլինելը թվային տեխնոլոգիաների հնարավորությունների վերաբերյալ, դրամական միջոցների պակասը տվյալ տեխնոլոգիաները ձեռք բերելու համար, ինչպես նաև պետական նախագծերի աջակցության պակասը փոքր բիզնեսին՝ SS արտադրանք և ծառայություններ ձեռք բերելու համար:

Նոր սերնդի թվային տեխնոլոգիաներն ունեն մի շարք առավելություններ՝ հնարավորություն կստեղծեն բարձրացնել ագրոպարենային համակարգի ներդրումների արդյունավետությունը, կդառնան գյուղատնտեսության պետական աջակցության գլխավոր տարրը և այլն, իսկ ճյուղի թվայնացումը հնարավորություն կտա զարգացնել ոլորտը արագացված տեմպերով:

3. Ծառայությունների ոլորտի զարգացում և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ:

Միջազգային մրցունակության աճը՝ որպես ՀՀ տնտեսական զարգացման գրավական: Ներկայիս գլոբալացման պայմաններում անհնար է պատկերացնել երկրի զարգացումը՝ առանց միջազգային չափանիշների համեմատական վերլուծության: Դրան համապատասխան երկրի իրավահավասար և ներդաշնակ ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը հնարավոր է միայն նրա համարժեք մրցունակության պայմանի դեպքում: Երկրի մրցունակությունը տնտեսական զարգացման առկա վիճակի և հեռանկարների ամփոփ ցուցանիշն է, որը պայմանավորում է երկրի մասնակցությունը միջազգային տնտեսական կյանքին, հանդես է գալիս որպես տնտեսական անվտանգության և բնակչության կենսամակարդակի երաշխավոր: Սույն հետազոտության նպատակը մրցունակության ներքին և արտաքին մարտահրավերների բացահայտման, դրանց վերլուծության, մրցակցային առավելությունների գնահատման հիման վրա համալիր մոտեցումների և առաջարկների մշակումն է, որոնց գործնական կիրառումը կնպաստի տարածաշրջանում Հայաստանի մրցունակության ներուժի իրացմանը: Այդ նպատակով կվերլուծվեն և կգնահատվեն երկրի մրցունակության վրա ազդող առավել նշանակալի գործոնները, կբացահայտվեն այդ գործոնների դերը ՀՀ միջազգային մրցունակության բարձրացման գործում, կբացահայտվեն ծովային ելք չունեցող երկրներին հատուկ հիմնախնդիրները և այդ համատեքստում ՀՀ արտահանման խթանման հիմնական առաջնահերթությունները, ինչպես նաև կհիմնավորվեն ՀՀ ներքին և տարածաշրջանային մրցունակության բարձրացմանն ուղղված հիմնական մոտեցումները: Միջազգային մրցունակության չափման հիմնական ցուցանիշը Համաշխարհային մրցունակության ինդեքսն է՝ իր 12 հիմնասյուներով և մոտ 100 ցուցանիշներով: Վերլուծության արդյունքում նախ էկոնոմետրիկ մեթոդների կիրառմամբ կգնահատվի համաշխարհային մրցունակության ինդեքսի փոփոխության ազդեցությունը տարբեր երկրների, այդ թվում և՝ ՀՀ տնտեսական աճի ձեռքբերման վրա: Այս ցուցանիշը ընդգրկում է երկրի զարգացման գրեթե բոլոր ոլորտները ինչպես տնտեսական, այնպես էլ՝ ոչ տնտեսական: Այս առանձին ցուցանիշների վերլուծությունը հնարավորություն կտա արձանագրել ՀՀ տնտեսական զարգացման թեր և դեմ կողմերը, բացահայտել առկա հնարավորություններն ու վտանգները: Կմշակվի հատուկ միջոցառումների համախումբ՝ ուղղված ՀՀ համաշխարհային մրցունակության ինդեքսի դիրքերի բարելավմանը՝ երկարաժամկետ կայուն աճի ապահովման համատեքստում:

Թեմայի ընտրությունը հիմնավորվում է ՀՀ 2014-2025թթ.հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի 8.1 կետի 120-րդ ենթակետով թիրախավորված ուղղությամբ:

4. Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն

Արդի ազգային տնտեսության հանգույցներում: Հայ տնտեսագիտական միտքը կուտակել է որոշակի նյութ հանրապետության արդի տնտեսական տեղաշարժերի ու կատարվող փոփոխությունների վերաբերյալ: Սույն ուսումնասիրությունն այդ շարժման ուրվագիծն է: ՀՀ տնտեսության ամենակարևոր հիմնախնդիրներն ուսումնասիրվել են հայ տնտեսագետների կողմից: Հենց այս կանորագույն հիմնախնդիրների համեմատական վերլուծությունն էլ կիրականացվի տվյալ հետազոտության շրջանակներում:

5. Ակնկալվող արդյունքները. Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում գիտական հոդվածների հրապարակում, ինչպես նաև Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում կամ ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ մենագրությունների հրատարակում:

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Վլադիմիր Հարությունյան)
(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Վլադիմիր Հարությունյան)
(ստորագրություն)

Հավելված N 3
«25» 01 2021 թ.
N 11-23 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման» ծրագրի

հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագիր	Գիտական հետազոտությունների 4 ուղղություններով՝ 1. Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ 2. Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ 3. Ծառայությունների ոլորտի զարգացում ու սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ	Գիտական թեմաների կատարում՝ ✓ ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կազմն ու կառուցվածքը ու դրանց փոփոխության միտումները հետհեղափոխական Հայաստանում ✓ Բարձր տեխնոլոգիական հենքի վրա տնտեսության ինովացիոն դիվերսիֆիկացման հնարավորություններն ու կառուցակարգերը Հայաստանի Հանրապետությունում ✓ Տնտեսության ճգնաժամային կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապե-	Գիտական հոդվածների, մենագրությունների հրապարակում	I եռամսյակ II եռամսյակ III եռամսյակ IV եռամսյակ	26,638.4 33,297.9 33,297.9 39,957.5

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով*

		4. Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն	տությունում ✓ ՀՀ-ում մարդու կյանքի կորստի ռիսկի գնահատումը շրջակա միջավայրի բացասական ազդեցության համատեքստում ✓ Թվային տնտեսության դերը ՀՀ ազրոպարենային համակարգում ✓ Միջազգային մրցունակության աճը՝ որպես ՀՀ տնտեսական զարգացման գրավական ✓ Արդի ազգային տնտեսության հանգույցներում			
Ընդամենը						133191.7

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Վլադիմիր Հարությունյան)
(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Վլադիմիր Հարությունյան)
(ստորագրություն)

Հավելված N 4
«25» 01 2021 թ.
N 6-23 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման» ծրագրի

(ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	109525.0	21905.1	27381.2	27381.2	32857.5
2	տնտեսական և այլ ծախսեր*	23666.7	4733.3	5916.7	5916.7	7100.0
ԸՆԴԱՄԵՆԸ		133191.7	**26638.4**	**33297.9**	**33297.9**	**39957.5**

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Վլադիմիր Հարությունյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (Կարինե Հակոբյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

---

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը*

Հավելված N 4.1
«25» 07 2021 թ.
N 21-23 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	3766.0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*2100.0*
	գազի ծառայություն	*0.0*
	ջրամատակարարման ծառայություն	*360.0*
	կապի ծառայություն	*1306.0*
	աղբահանություն	*0.0*
2	Գույք	500.0
3	Սարքեր և սարքավորումներ	2000.0
4	Նյութեր	1500.0
5	Գործուղումներ	1000.0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	500.0
7	Արշավախմբեր	0.0
8	Հրատարակման ծախսեր	3000.0
	Այլ	11400.7
Ընդամենը		**23.666.7**

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Վլադիմիր Հարությունյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (Կարինե Հակոբյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

---

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում*

Հավելված N 5
«25» 01 2021թ.
N 15-23 պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման» ծրագրի

(ծրագրի անվանումը)

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Ամսական աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1	Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի	Տնօրեն, գիտական ուղղության ղեկավար, թեմայի ղեկավար, գլխավոր գիտաշխ.	տ.գ.դ	450.0
2	Սարգսյան Լիլիթ Նորայրի	Փոխտնօրեն, գիտական ուղղության ղեկավար, թեմայի ղեկավար, ավագ գիտաշխ.	տ.գ.թ	340.0
3	Բաղդասարյան Քրիստինե Յուրիի	Գիտ. քարտուղար, թեմայի ղեկավար, առաջատ. գիտաշխ.	տ.գ.թ	310.0
4	Սուվարյան Յուրի Միքայելի	Տնօրենի խորհրդական, գլխավոր գիտաշխ.	տ.գ.դ	100.0
5	Հակոբյան Կարինե Գեղամի	Գլխավոր հաշվապահ		300.0
6	Սարինյան Ռոբերտ Ներսեսի	Գիտական ուղղության ղեկավար, թեմայի ղեկավար, գլխավոր գիտաշխ	տ.գ.դ	210.0
7	Վահանյան Գրիգորի Արշալույսի	Գլխավոր գիտաշխատող	տ.գ.դ	200.0
8	Մարկոսյան Հայկ Աշոտի	Թեմայի ղեկավար, առաջատար գիտաշխատող,	տ.գ.թ	210.0
9	Գաբրիելյան Բելլա Վալերիի	Առաջատար գիտաշխատող	տ.գ.թ	161.0
10	Մանուչարյան Մերի Գագիկի	Գիտական ուղղության ղեկավար, թեմայի ղեկավար, ավագ գիտաշխ	տ.գ.թ	210.0
11	Դալլաքյան Սվետլանա Արկադիի	Թեմայի ղեկավար, ավագ գիտաշխատող, ինստիտուտի պաշտոնական կայքի նյութերի ձևավորող	տ.գ.թ	200.0
12	Պողոսյան Շողեր Պյոտրի	Ավագ գիտաշխատող	տ.գ.թ	150.0
13	Մանուկյան Գրիգոր Թաթուլի	Ավագ գիտաշխատող	տ.գ.թ	150.0
14	Հակոբյան Եվգենյա Արտաշեսի	Գիտաշխատող, ասպիրանտուրայի պատասխանատու	տ.գ.թ	180.0
15	Զախարյան Արմինե Գրիգորի	գիտաշխատող	տ.գ.թ	140.0
16	Փարսադանյան Տաթևիկ Սմբատի	գիտաշխատող	տ.գ.թ	140.0

17	Իսահակյան Ռազմիկ Կամոյի	գիտաշխատող	տ.գ.թ	140.0
18	Հարությունյան Գևորգ Արամի	գիտաշխատող	տ.գ.թ	140.0
19	Թորգոմյան Սնակ Վանիկի	գիտաշխատող	տ.գ.թ	140.0
20	Պապիկյան Ստեփան Ռաֆիկի	գիտաշխատող	տեխ.գ.թ	140.0
21	Ոսկանյան Գոհար Վազգենի	գիտաշխատող	տ.գ.թ	140.0
22	Շահինյան Տաթևիկ Վազգենի	գիտաշխատող		130.0
23	Ազատյան Լիանա Սամվելի	գիտաշխատող		130.0
24	Ավետիսյան Աշոտ Վաչագանի	կրտսեր գիտաշխ	տ.գ.թ	110.0
25	Ղազազյան Վանո Լևոնի	կրտսեր գիտաշխ	տ.գ.թ	55.0
26	Կյուրեղյան Արփինե Մեխակի	կրտսեր գիտաշխ	տ.գ.թ	110.0
27	Պետրոսյան Դավիթ Արմենակի	կրտսեր գիտաշխ., ինստիտուտի համակարգչային ցանցի, ինստիտուտի պաշտոնական կայքի պատասխանատու		150.0
28	Սարգսյան Անուշ Տիգրանի	կրտսեր գիտաշխ		100.0
29	Ըռքոյան Արսեն Սլավիկի	կրտսեր գիտաշխ		100.0
30	Պողոսյան Մարիամ Վարդանի	տնտեսագետ, ինստիտուտի պաշտոնական կայքի թարգմանիչ		120.0
31	Պետրոսյան Լիլիթ Մանվելի	տնտեսագետ		100.0
32	Գրիգորյան Դոնարա Հովիկի	տնտեսագետ		100.0
33	Մուրադյան Մերի Համբարձումի	տնտեսագետ		100.0
34	Մարգարյան Սոնա Ատոմի	տնտեսագետ		95.0
35	Գոգչյան Ինեսսա Ժիրայրի	տնտեսագետ		95.0
36	Գրիգորյան Սոնա Հրաչիկի	տնտեսագետ		95.0
37	Նալբանդյան Հմայակ Ռոմիկի	տնտեսագետ		95.0
38	Կարապետյան Ռուզաննա Արմենակի	կադրերի ավագ տեսուչ, հաշվետար		250.0
39	Մարկոսյան Անահիտ Խաչատուրի	հրատարակչության պատասխանատու		200.0
40	Մանուկյան Վլադիկ Լևոնի	ընդհանուր բաժնի վարիչ		170.0
41	Ավագյան Նարինե Հրանտի	գրադարանավար		130.0
42	Բաբայան Մաղլենա Մկրտչի	համակարգչային օպերատոր		125.0
43	Սարաֆյան Դիաննա Գևորգի	համակարգչային օպերատոր		125.0
44	Համբարձումյան Մարիետա Կաղլենի	համակարգչային օպերատոր		125.0

45	Առաքելյան Անահիտ Միշայի	քարտուղար-գործավար		140.0
46	Անտոնյան Արսեն Ռուբենի	վարորդ		150.0
47	Մելքոնյան Ռադիկ Մուշեղի	պահակ		100.0
48	Կարապետյան Հասմիկ Հենրիկի	հավաքարար		134.0
49	Թափուր	ավագ. գիտաշխ	տ.գ.թ	150.0
50	Թափուր	ավագ. գիտաշխ	տ.գ.թ	150.0
51	Թափուր	գիտաշխատող	տ.գ.թ	140.0
52	Թափուր	գիտաշխատող	տ.գ.թ	140.0
53	Թափուր	գիտաշխատող	տ.գ.թ	140.0
54	Թափուր	կրտսեր գիտաշխատող	տ.գ.թ	110.0
55	Թափուր	կրտսեր գիտաշխատող	տ.գ.թ	110.0
Ընդամենը				**8425.0**

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Վլադիմիր Հարությունյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության **անձնակազմի կառավարման բաժնի պետ՝** _____ (Ռուզաննա Կարապետյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.